Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 03

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<16>> փետրվարի 2022թ. ք. Երևան

2022 թվականի փետրվարի 16-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար
Ս. Բաղինյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական, հանձնաժողովի անդամ
Խ. Սողոմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային օդային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ա. Խաչատրյանը:

Նիստն արձանագրում էր հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 4 հայտերի քննարկում:

2. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու համար ներկայացված 6 հայտերի քննարկում:

3. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 2 դիմումների քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

1.1 Քննարկվեց՝

«ՊՐՈՋԵՔՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հունվարի 16-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և փետրվարի 10-ին ի լրումն ներկայկացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հունվարի 13-ին լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին հայտ և հայտին կից փաստաթղթեր:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, 04.02.2022թ. թիվ ԱՍ/25.1/2153-2022 գրությամբ Կազմակերպությանը ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին: Կազմակերպությունը 10.02.2022թ. 6203 մտից գրությամբ ներկայկացրել է լրացուցիչ նյութեր և շտկել է հայտում և կից փաստաթղթերում առկա թերությունները: Ներկայացված սարքավորումների և այլ պայմանների համապատասխանության ուսումնասիրություն իրականացվել է Վարդենիսի համայնքապետարանի աշխատակիցների կողմից՝ ներկայացված բազայում, որի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է Վարդենիսի համայնքապետարանի 15.02.2022թ. թիվ 89 /մտից՝ 7088-2022/ գրությամբ:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՊՐՈՋԵՔՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.2 Քննարկվեց՝

«ՏԵԽԶՆՆՈՒՄ 49» ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հունվարի 26-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և փետրվարի 9-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հունվարի 26-ին լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին հայտ և հայտին կից փաստաթղթեր:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, 01.02.2022թ. թիվ ԱՍ/25.1/2061-2022 գրությամբ Կազմակերպությանը ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝

ա/ ներկայացված դիմումում անհրաժեշտ է նշել լիցենզիայի հետ հայցվող ներդիրի տեսակը՝ ըստ հոսքագծի,

բ/ բացակայում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 30112021-09-0014 վկայականի՝ շինությունների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող 2-րդ էջը և սույն վկայականի գրանցման համար հիմք հանդիսացած 25.11.2021թ. վարձակալության պայմանագիրը, ինչը հնարավորություն չի ընձեռում փաստաթղթային եղանակով ուսումնասիրելու արտադրական տարածքի համապատասխանությունը ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 11-ի N 690-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգով սահմանված պահանջներին,

գ/ բացակայում է շինությունների հատակագիծը կազմող «Կապիտալ ԳԵՈ» ՍՊ ընկերության որակավորումը հավաստող վկայականը,

դ/ բացակայում են ՀՀ կառավարության N 1565-Ն որոշման հավելվածի ցանկ N 2-ով սահմանված տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ դրանց վիճակի ստուգման համար օգտագործվող տեխնիկական արատորոշման միջոցների տեխնիկական բնութագրերը պարունակող տեխնիկական անձնագրերը,

ե/ հայտին կից փաստաթղթերում առկա չեն ՀՀ կառավարության N 1565-Ն որոշման հավելվածի ցանկ N 2-ով սահմանված տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ դրանց վիճակի ստուգման համար օգտագործվող չափման միջոցների, մասնավորապես՝ անվադողերի բացվածքի շեղումները որոշելու համար հարմարեցված ձողակարկինի, դողերի ճնշաչափերի հավաքածուի, դողերի պահպանաշերտի նախշերի խորության չափիչի, ծխաչափի, հոսարոնիչի, տրանսպորտային միջոցների ղեկային վարման շարժաբերի և կախոցի վիճակի ստուգման համար նախատեսված ստենդի, կոմպրեսորի մանոմետրի՝ «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքով սահմանված կարգով չափագիտության վկայագրման դրական արդյունքները վավերացնող ստուգաչափման վկայականները,

զ/ բացակայում են կոմպրեսորի, նվազագույնը 640x320 մատրիցայի կետայնությամբ թվային ինֆրակարմիր տեսախցիկի և ավտոմեխանիկի գործիքների հավաքակազմի առկայության վերաբերյալ տեղեկատվությունը:

Միաժամանակ Կազմակերպությունը առաջարկվել է «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել տրանսպորտային միջոցների տեխնիկական գործունեության իրականացման լիցենզիայի տրամադրման հայտում և հայտին կից ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները և տեղեկացվել է, որ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը 09.02.2022թ. 6039 մտից գրությամբ ներկայացրել է լրացուցիչ նյութեր, սակայն ամբողջությամբ չի վերացրել թիվ ԱՍ/25.1/2061-2022 գրությամբ նշված թերությունները, մասնավորապես՝ դ/ կետով նշված թերությունը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՏԵԽԶՆՆՈՒՄ 49» ՍՊԸ	0 կողմ, 7 դեմ

Որոշեցին՝

հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա չէ լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.3 Քննարկվեց՝

«ՍԱՄ ԽԱՉ» ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2022 թվականի փետրվարի 2-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և փետրվարի 11-ին ի լրումն ներկայկացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի փետրվարի 2-ին լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին հայտ և հայտին կից փաստաթղթեր:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, 04.02.2022թ. թիվ ԱՍ/25.1/2501-2022 գրությամբ Կազմակերպությանը ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝

ա/ ներկայացված դիմումում անհրաժեշտ է նշել լիցենզիայի հետ հայցվող ներդիրի տեսակը՝ ըստ հոսքագծի,

բ/ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 18012022-04-0076 վկայականով «ՍԱՄ ԽԱՉ» ՍՊ ընկերությանը տրամադրված՝ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Մ. Հերացու փ., 6/2 հասցեում գտնվող շինությունը հանդիսանում է «ԱՐԱ ԵՎ ԱՅԾԵՄՆԻԿ» ՍՊ ընկերության N ՏՄՏԶ 00032 լիցենզիայով տեխնիկական զննության գործունեության վայր,

գ/ բացակայում է Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Մ. Հերացու փ., 6/2 հասցեում տեղակայված շինության հատակագիծը՝ երկարության, լայնության, մուտքի-ելքի նշագրմամբ, ինչը հնարավորություն չի ընձեռում փաստաթղթային եղանակով ուսումնասիրելու արտադրական տարածքի համապատասխանությունը ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 11-ի N 690-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգով սահմանված պահանջներին,

դ/ բացակայում են ՀՀ կառավարության N 1565-Ն որոշման հավելվածի ցանկ N 2-ով սահմանված տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ դրանց վիճակի ստուգման համար օգտագործվող տեխնիկական արատորոշման միջոցների տեխնիկական բնութագրերը պարունակող տեխնիկական անձնագրերը,

ե/ հայտին կից փաստաթղթերում առկա չեն ՀՀ կառավարության N 1565-Ն որոշման հավելվածի ցանկ N 2-ով սահմանված տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ դրանց վիճակի ստուգման համար օգտագործվող չափման միջոցների՝ «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքով սահմանված կարգով չափագիտության վկայագրման դրական արդյունքները վավերացնող ստուգաչափման վկայականները,

զ/ բացակայում են կոմպրեսորի, նվազագույնը 640x320 մատրիցայի կետայնությամբ թվային ինֆրակարմիր տեսախցիկի և ավտոմեխանիկի գործիքների հավաքակազմի առկայության վերաբերյալ տեղեկատվությունը:

Միաժամանակ Կազմակերպությունը առաջարկվել է «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել տրանսպորտային միջոցների տեխնիկական գործունեության իրականացման լիցենզիայի տրամադրման հայտում և հայտին կից ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները և տեղեկացվել է, որ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը 11.02.2022թ. 6641 մտից գրությամբ ներկայացրել է լրացուցիչ նյութեր, սակայն ամբողջությամբ չի վերացրել թիվ ԱՍ/25.1/2501-2022 գրությամբ նշված թերությունները, մասնավորապես՝ բ/ կետով նշված թերությունը, չի ներկայացրել նոր տարածք, իսկ «ԱՐԱ ԵՎ ԱՅԾԵՄՆԻԿ» ՍՊ ընկերության N ՏՄՏԶ 00032 լիցենզիան ուժը կորցրած չի ճանաչված:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՍԱՄ ԽԱՉ» ՍՊԸ	0 կողմ, 7 դեմ

Որոշեցին՝

հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա չէ լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.4 Քննարկվեց՝

«ՍԱՄ ԽԱՉ» ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2022 թվականի փետրվարի 2-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և փետրվարի 11-ին ի լրումն ներկայկացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի փետրվարի 2-ին լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին հայտ և հայտին կից փաստաթղթեր:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, 04.02.2022թ. թիվ ԱՍ/25.1/2500-2022 գրությամբ Կազմակերպությանը ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝

ա/ ներկայացված դիմումում անհրաժեշտ է նշել լիցենզիայի հետ հայցվող ներդիրի տեսակը՝ ըստ հոսքագծի,

բ/ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 18012022-04-0037 վկայականով «ՍԱՄ ԽԱՉ» ՍՊ ընկերությանը տրամադրված՝ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Երևան-Մարգարա խճուղի 2/2 հասցեում գտնվող շինությունը հանդիսանում է «ԱՐԱ ԵՎ

ԱՅԾԵՄՆԻԿ» ՍՊ ընկերության N ՏՄՏԶ 00013 լիցենզիայով տեխնիկական զննության գործունեության վայր,

գ/ բացակայում է Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Մ. Հերացու փ., 6/2 հասցեում տեղակայված շինության հատակագիծը՝ երկարության, լայնության, մուտքի-ելքի նշագրմամբ, ինչը հնարավորություն չի ընձեռում փաստաթղթային եղանակով ուսումնասիրելու արտադրական տարածքի համապատասխանությունը ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 11-ի N 690-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգով սահմանված պահանջներին,

դ/ բացակայում են ՀՀ կառավարության N 1565-Ն որոշման հավելվածի ցանկ N 2-ով սահմանված տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ դրանց վիճակի ստուգման համար օգտագործվող տեխնիկական արատորոշման միջոցների տեխնիկական բնութագրերը պարունակող տեխնիկական անձնագրերը,

ե/ հայտին կից փաստաթղթերում առկա չեն ՀՀ կառավարության N 1565-Ն որոշման հավելվածի ցանկ N 2-ով սահմանված տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ դրանց վիճակի ստուգման համար օգտագործվող չափման միջոցների՝ «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքով սահմանված կարգով չափագիտության վկայագրման դրական արդյունքները վավերացնող ստուգաչափման վկայականները,

զ/ բացակայում են կոմպրեսորի, նվազագույնը 640x320 մատրիցայի կետայնությամբ թվային ինֆրակարմիր տեսախցիկի և ավտոմեխանիկի գործիքների հավաքակազմի առկայության վերաբերյալ տեղեկատվությունը:

Կազմակերպությունը 11.02.2022թ. 6641 մտից գրությամբ ներկայացրել է լրացուցիչ նյութեր, սակայն ամբողջությամբ չի վերացրել թիվ ԱՍ/25.1/2500-2022 գրությամբ նշված թերությունները, մասնավորապես՝ բ/ կետով նշված թերությունը, չի ներկայացրել նոր տարածք, իսկ «ԱՐԱ ԵՎ ԱՅԾԵՄՆԻԿ» ՍՊ ընկերության N ՏՄՏԶ 00013 լիցենզիան ուժը կորցրած չի ճանաչված: Միաժամանակ Կազմակերպությունը առաջարկվել է «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել տրանսպորտային միջոցների տեխնիկական գործունեության իրականացման լիցենզիայի տրամադրման հայտում և հայտին կից ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները և տեղեկացվել է, որ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՍԱՄ ԽԱՉ» ՍՊԸ	0 կողմ, 7 դեմ

Որոշեցին՝

հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա չէ լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

2.1 Քննարկվեց՝

<<ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հունվարի 5-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և հունվարի 20-ին ի լրումն ներկայկացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին /Գործունեության վայր՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Երևանյան խճ., 185/:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հունվարի 5-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, 14.01.2022թ. թիվ ԱՍ/25.1/664-2022 գրությամբ հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝

ա/ բացակայում է ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998 -Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 8-րդ կետի «բ» ենթակետով սահմանված՝ գործունեության համար նախատեսված արտադրական բազայի /ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Երևանյան խճ., 185/ սեփականության կամ օգտագործման իրավունքի ձեռքբերումը հաստատող վկայականի պատճենը և հատակագիծը: Անհրաժեշտ է լիազոր մարմին ներկայացնել ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի /շինության/՝ անշարժ գույքի նկատմամբ «Պրեմիում Գազ» ՍՊ ընկերության իրավունքների պետական գրանցման վկայականի պատճենը, ինչպես նաև տարածքի /շինության/ հատակագիծը ըստ հայցվող գործունեության տեսակների՝ համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 28-րդ և 29-րդ կետերի պահանջի: Հատակագծում անհրաժեշտ է առանձին ներկայացնել գազաբալոնային սարքավորումներն ավտոտրանսպորտային միջոցներում տեղակայելու տեղամասի, գազաբալոնները պարբերաբար վկայագրելու և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերը փորձարկելու տեղամասի և ճնշարկային տեղամասի համար նախատեսված շինությունների պարամետրերը /երկարություն, լայնություն, բարձրություն, մուտք-ելք/,

բ/ բացակայում է ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998 -Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 8-րդ կետի «զ» ենթակետով սահմանված՝ արտադրական բազայի հիմնական տեխնոլոգիական սարքավորումներով հագեցվածության մասին տեղեկանք՝ համաձայն N 6 ձևի: Անհրաժեշտ է լիազոր մարմին ներկայացնել հիմնական տեխնոլոգիական սարքավորումների պարամետրերը հաստատող տեխնիկական անձնագրերը,

գ/ փորձաքննության N1465 եզրակացության համաձայն՝ արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննությունն իրականացվել է Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 2388-Ն որոշման պահանջներին համապատասխան, սակայն սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման կարգը սահմանված է Կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 2011-Ն

որոշմամբ, իսկ Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 2388-Ն որոշումը ուժը կորցրած է ճանաչված:

Միաժամանակ հայտատուին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջարկվել է նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և նախազգուշացվել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը 20.01.2022թ. 3017-2022 մտից գրությամբ ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով 14.01.2022թ. թիվ ԱՍ/25.1/664-2022 գրությամբ նշված թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՊՐԵՄԻՈՒՄ ԳԱԶ>> ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.2 Քննարկվեց՝

<<ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հունվարի 5-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և հունվարի 20-ին ի լրումն ներկայկացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին /Գործունեության վայր՝ ՀՀ, ք. Երևան, Ն. Տիգրանյան 1/1/:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հունվարի 5-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, 14.01.2022թ. թիվ ԱՍ/25.1/667-2022 գրությամբ հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝

ա/ բացակայում է ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998 -Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 8-րդ կետի «բ» ենթակետով սահմանված՝ գործունեության համար նախատեսված արտադրական բազայի /ՀՀ, ք. Երևան, Ն. Տիգրանյան 1/1/ սեփականության կամ օգտագործման իրավունքի ձեռքբերումը հաստատող վկայականի պատճենը և հատակագիծը: Անհրաժեշտ է լիազոր մարմին ներկայացնել ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի /շինության/՝ անշարժ գույքի նկատմամբ «Պրեմիում Գազ» ՍՊ ընկերության իրավունքների պետական գրանցման վկայականի պատճենը, ինչպես նաև տարածքի /շինության/ հատակագիծը ըստ հայցվող գործունեության

տեսակների՝ համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 28-րդ և 29-րդ կետերի պահանջի: Հատակագծում անհրաժեշտ է առանձին ներկայացնել գազաբալոնային սարքավորումներն ավտոտրանսպորտային միջոցներում տեղակայելու տեղամասի, գազաբալոնները պարբերաբար վկայագրելու և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերը փորձարկելու տեղամասի և ճնշարկային տեղամասի համար նախատեսված շինությունների պարամետրերը /երկարություն, լայնություն, բարձրություն, մուտք-ելք/,

բ/ բացակայում է ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998 -Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 8-րդ կետի «զ» ենթակետով սահմանված՝ արտադրական բազայի հիմնական տեխնոլոգիական սարքավորումներով հագեցվածության մասին տեղեկանք՝ համաձայն N 6 ձևի: Անհրաժեշտ է լիազոր մարմին ներկայացնել հիմնական տեխնոլոգիական սարքավորումների պարամետրերը հաստատող տեխնիկական անձնագրերը,

գ/ փորձաքննության N1465.1 եզրակացության համաձայն՝ արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննությունն իրականացվել է Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 2388-Ն որոշման պահանջներին համապատասխան, սակայն սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման կարգը սահմանված է Կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 2011-Ն որոշմամբ, իսկ Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 2388-Ն որոշումը ուժը կորցրած է ճանաչված:

Միաժամանակ հայտատուին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջարկվել է նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և նախազգուշացվել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը 24.01.2022թ. 3384-2022 մտից գրությամբ ներկայացրել է լրացուցիչ նյութեր, սակայն ամբողջովին չի վերացրել 14.01.2022թ. թիվ ԱՍ/25.1/667-2022 գրությամբ նշված թերությունները, մասնավորապես՝ չի ներկայացրել ա/ կետով նշված՝ գործունեության համար նախատեսված արտադրական բազայի /ՀՀ, ք. Երևան, Ն. Տիգրանյան 1/1/ սեփականության կամ օգտագործման իրավունքի ձեռքբերումը հաստատող վկայականի պատճենը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՊՐԵՄԻՈՒՄ ԳԱԶ>> ՍՊԸ	0 կողմ, 7 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.3 Քննարկվեց՝

<<ՏՈՏԱԼ ԳԱԶ>> ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2022 թվականի փետրվարի 3-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված

նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին /Գործունեության վայր՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Երևանյան խճ., 185/:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի փետրվարի 3-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՏՈՏԱԼ ԳԱԶ>> ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.4 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ՍՊԱՐՏԱԿ ԱՅՎԱԶՅԱՆԻ /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հունվարի 25-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և փետրվարի 2-ին ի լրումն ներկայկացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հունվարի 25-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին, իսկ փետրվարի 2-ին մտից 4812-2022 գրությամբ ներկայացրել է լրացուցիչ նյութեր:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ՍՊԱՐՏԱԿ ԱՅՎԱԶՅԱՆ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.5 Քննարկվեց՝

<<ԷՔՍՊԵՐՏ ԹԵՉ>> ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հունվարի 20-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը փետրվարի 2-ին ի լրումն ներկայկացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հունվարի 20-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, 31.01.2022թ. թիվ ԱՍ/25.1/1898-2022 գրությամբ հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝

ա/ անհամապատասխանություն 25.09.2014թ. h 4585 վարձակալության պայմանագրով և անշարժ գույքի իրավունքների նկատմամբ իրավունքների գրանցման N 10092019-01-0241 վկայականով «Էքսպերտ Թեչ» ՍՊ ընկերությանը տրամադրված տարածքի և «Էքսգազել» ՍՊ ընկերության կողմից կազմված հատակագծում նշված չափերի մեջ: Վարձակալության պայմանագրով և N 10092019-01-0241 վկայականով «Էքսպերտ Թեչ» ՍՊ ընկերությանը տրամադրված է 240,4 քմ. արտադրական նպատակային նշանակության շինություն, իսկ հատակագծում լիցենզիայի տրամադրման համար ներկայացված տարածքը 258,7 քմ. է /109,9+113,6+35,2=258,7/: Միաժամանակ հատագծում նշված չէ ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման համար նախատեսված /առանձնացված/ տարածքները:

բ/ բացակայում են սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման համար օգտագործվող չափման միջոցների՝ մասնավորապես ճնշաչափերի «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքով սահմանված կարգով չափագիտության լիազոր մարմնի կողմից տրամադրված ստուգաչափման վկայականները:

Միաժամանակ հայտատուին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջարկվել է նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և նախազգուշացվել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը 02.02.2022թ. 4816-2022 մտից գրությամբ ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով 14.01.2022թ. թիվ ԱՍ/25.1/1898-2022 գրությամբ նշված թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ԷՔՍՊԵՐՏ ԹԵՋ>> ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՋ ՍՊԱՐՏԱԿ ԱՅՎԱԶՅԱՆ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.6 Քննարկվեց՝

<<ՆՀՈ-ՀՐԱՋ>> ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2022 թվականի փետրվարի 4-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի փետրվարի 4-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՆՀՈ-ՀՐԱՋ>> ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումների քննարկում:

Քննարկվեցին՝

ՍԱՐԳԻՍ ՍՄԲԱՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 2022 թվականի փետրվարի 7-ի և ԱՐՏՅՈՄ ԴԱՎԻԹԻ ԹԱՄՐԱԶՅԱՆԻ 2022 թվականի փետրվարի 8-ի դիմումները՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման համապատասխանաբար՝ ՏՖ N 10967 և ՏՖ N 03971 լիցենզիաները և լիցենզիայի N 00001 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

ներկայացրեց ՍԱՐԳԻՍ ՍՄԲԱՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 2022 թվականի փետրվարի 7-ի և ԱՐՏՅՈՄ ԴԱՎԻԹԻ ԹԱՄՐԱԶՅԱՆԻ 2022 թվականի փետրվարի 8-ի դիմումները՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման համապատասխանաբար՝ ՏՖ N 10967 և ՏՖ N 03971 լիցենզիաները և լիցենզիայի N 00001 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ լիցենզիայի և ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ՍԱՐԳԻՍ ՍՄԲԱՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	7 կողմ, 0 դեմ
ԱՐՏՅՈՄ ԴԱՎԻԹԻ ԹԱՄՐԱԶՅԱՆ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի պատասխանատու
քարտուղար Ա. Ստեփանյան